

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Երևանի պետական համալսարանի

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի

2024 թ. դեկտեմբերի 12-ին կայացած թիվ 8 նիստի

Կենսաբանության ֆակուլտետի ԳԽ դեկտեմբերի 12-ի հարցման կարգով թիվ 8 արտահերթ նիստի օրակարգում ներառված էր 3 հարց:

1. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի 2024-2025 ուս. տարվա մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:
2. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Իրինա Սամվելի Այվազյանի ատենախոսության թեմայի վերահաստատման, դասիչի և գիտական ղեկավարի փոփոխության հարցը:
3. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Մերի Կարենի Իսկանդարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերահաստատման հարցը:

ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի 2024-2025 ուս. տարվա մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՅ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, ով համառոտ ներկայացրեց կենսաբանության ֆակուլտետի 2024-2025 ուս. տարվա «Ընդհանուր և բժշկական կենսաքիմիա» (9 ուսանող), «Կիրառական մանրէաբանություն» (11 ուսանող), «Գենոմիկա և բժշկական բջջագենետիկա» (10 ուսանող), «Հիմնարար և կիրառական ֆիզիոլոգիա» (8 ուսանող), «Էկոլոգիա և կենսատեսությունների կառավարում» (3 ուսանող), «Կենսաֆիզիկա» (4 ուսանող) մագիստրոսական կրթական ծրագրերի ուսանողների թեզերի թեմաները և գիտական ղեկավարներին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի 2024-2025 ուս. տարվա մագիստրատուրայի 1 կուրսի ուսանողների թեզերի թեմաները և գիտական ղեկավարներին:

ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Իրինա Սամվելի Այվազյանի ատենախոսության թեմայի վերահաստատման, դասիչի և գիտական ղեկավարի փոփոխության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., դոցենտ Ա.Ա. Փոլադյանը: Նա նշեց, որ Իրինա Սամվելի Այվազյանը 2018թ. դեկտեմբերի 5-ին հրամանագրվել է որպես հեռակա ուսուցմամբ ասպիրանտ 4 տարի ժամկետով՝ անվճար հիմունքներով: Թեկնածուական ատենախոսության թեման հաստատվել է «Հայաստանի պղնձի հանքապարներից և պոչամբարներից մեկուսացված մանրէների մետաղակայունության մեխանիզմների առանձնահատկությունները» Գ.00.07 «Միկրոբիոլոգիա, կենսատեխնոլոգիա» մասնագիտությամբ: Որպես գիտական ղեկավար 14.03.2019թ. նշանակվել է ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ. պրոֆեսոր Ա. Թոչունյանը: 2020թ. դեկտեմբերի 23-ին կատարվել է գիտական ղեկավարի փոփոխություն և որպես նոր ղեկավար նշանակվել է կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.դ. Հ. Փանոսյանը: 2021թ.- ից Ի. Այվազյանը ուսումնառությունը դադարեցրել է երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու պատճառով: 2024թ.ի մայիսի 10-ից Ի. Այվազյանը վերականգնվել է և ներկայումս հանդիսանում է 3-րդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ: Ա. Փոլադյանը նշեց, որ 2023թ. հուլիսի 1-ից նա աշխատում է ցիտոգենետիկայի ոլորտում՝ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի Փորձարարական կենդանաբանության լաբորատորիայում որպես ավագ լաբորանտ, ընդգրկված է 23IRF-1F06 ծածկագրով «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրման աջակցության ծրագիր 2023» 5 տարի տևողությամբ դրամաշնորհում (Cytogenomics of animal germ cells for investigation of hybridogenous evolution in Armenia): Ի. Այվազյանի կողմից կատարված հետազոտությունների արդյունքները ամփոփված են միջազգային գիտաժողովների 2 թեզիսներում և մեկ հոդված ուղարկվել է տպագրության Q1 վարկանիշով ամսագիր: Հաշվի առնելով Իրինա Այվազյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը, ինչպես նաև գենետիկայի և բջջաբանության ու կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնների կարծիքները անհրաժեշտություն է առաջացել փոխել մասնագիտության դասիչը, վերահաստատել ատենախոսության թեման և հաստատել նոր ղեկավար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով վերոնշյալը՝ վերահաստատել Իրինա Սամվելի Այվազյանի թեկնածուական ատենախոսության թեման «Կենդանիների մեյոզի պրոֆագ I փուլում սեռական բջիջներով սահմանափակված տարբեր քրոմոսոմների (GRC) տեսակների ուսումնասիրությունը՝ Phylloscopus ցեղի թռչունների օրինակով», Գ.00.15 «Գենետիկա» մասնագիտությամբ, գիտական ղեկավար նշանակել

Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի «Փորձարարական կենդանաբանության լաբորատորիա»-ի վարիչ՝ կ.գ.թ. Վիկտոր Սպանգենբերգին:

ԼՄԵՑԻՆ՝ ԵՂՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Մերի Կարենի Իսկանդարյանի «*Ralstonia eutropha* մանրէի հետերոտրոֆ աճման տարբեր պայմաններում կենսաէներգետիկական չափանիշների և H₂-օքսիդացնող հիդրոգենազային ակտիվության ուսումնասիրումը» թեկնածուական ատենախոսության թեմայի վերահաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ գիտական ղեկավար, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ Ա. Ա. Փոլադյանը: Նա նշեց, որ անհրաժեշտություն է առաջացել կատարել բակտերիայի անվան փոփոխություն, որը պայմանավորված է վերջին տարիներին գիտական հանրությունում *Ralstonia eutropha*-ի փոխարեն առավել կիրառելի դարձած *Cupriavidus necator* H16-ը անվանումը: Այն կապված է տաքսոնոմիական վերանայումների և գենետիկական ուսումնասիրությունների հետ: Գենոմի և ֆիլոգենետիկ տվյալների հիման վրա պարզվել է, որ այս բակտերիան պատկանում է *Cupriavidus* ցեղին, այլ ոչ թե *Ralstonia* ցեղին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով գիտական ղեկավարի և ամբիոնի կարծիքը վերահաստատել Մերի Իսկանդարյանի թեկնածուական ատենախոսության թեման «*Cupriavidus necator* H16 մանրէի հետերոտրոֆ աճման տարբեր պայմաններում H₂-օքսիդացնող հիդրոգենազային ակտիվության և կենսաէներգետիկական չափանիշների ուսումնասիրումը» Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ:

Գիտական խորհրդի նախագահ, կ.գ.դ., դոցենտ

Գ.Ա. Ղազարյան

Գիտական խորհրդի քարտուղար, կ.գ.թ., դոցենտ

Ի.Վ. Շահազիզյան

